

ղակները, մատանիները նույն դերն էին կատարում, ըստ որում սրանց շարքն էր դասվում նաև զոտին՝ անկախ նյութից:

5. Հիմնականում վզնոցները, բացի շոր աչքից ու շարքերից պաշտպանելուց, օգտագործվում էին նաև որպես զրավ՝ սրբատեղիներում: Հիվանդները դրանք կրում էին մինչև ապաքինվելը, այնուհետև տանում թողնում էին սրբատեղիում հիվանդությունն այնտեղ թողնվելու հավատքով:

6. Բւշազրավ է, որ ինչպես հավատքը, այնպես էլ այս պահպանակների ձևերը, առանց փոփոխություն գալիս են ուշ քրոնզի և վաղ երկաթի դարաշրջանից, հասնելով մինչև XX դ. սկզբները: Հնագույն հավատալիքներում երկաթն ու պողպատը երկնային ծագում են ունեցել, եզել են կայծակի մարմնավորումներից: Հատկապես սա է պատճառը, որ մարդիկ շարքերից ու կայծակից պաշտպանելու գործությունն են վերագրել այս մետաղներին:

Մեր օրերում մետաղե օղակածև պահպանակներ չեն պատրաստվում, սակայն մոդուլուրը սովորույթի ուժով շարունակում է կենցաղային երկաթե ու պողպատե առարկաներն օգտագործել որպես հմայական պահպանակ:

ՋԱԿԵՆ ԽՈՒՄԻՏՅԱՆ

ԾԵՄԱՆ ՀԱՅԵՐԻ ԱՄՈՒՄՆԱ-ՀԱՐՄԱՆԵԱՆ

ՍՈՎՈՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ /XIX Դ.ՎԵՐՋ - XX Դ. ՍԿԻՋՔ/

Հայ պատմա-ազգագրական գրականության մեջ ամուսնա-հարսանեկան սովորույթները տակավին չեն ենթարկվել թեմատիկ-մենագրական քննություն, մինչդեռ սոցիո-նորմատիվ մշակույթի այդ տարրի գիտական ուսումնասիրությունը հույժ շահեկան կարող է լինել ոչ միայն մոդուլուրի ծիսական կյանքի ամփոփ պատկերը ներկայացնելու, այլև էթնիկ մշակույթի բազում այլ կարևոր մանրամասեր բացահայտելու առումով: Այս տեսակետից հետաքրքրության է արժանի նաև նշված ծիսակարգը կատարողների ու մասնակիցների կազմի բնութագրումը:

Ջեկուցման մեջ այդ հարցը դրվում է փեսային, նրա սոցիալ-իրավական ու բարոյական կերպարին՝ առնչվող ամենատարբեր ձևերի ու սովորույթների համակողմանի դիտարկման տեսանկյունով: Ըստ որում, նկատի է առնվում, փեսա, հասկացությունն այն մակարդակը, երբ նա փեսա է ողջ համայնքի աչքում, հարսանյաց հանգամանքներում, բայց դեռևս հիմնովին չի մտել ազգակցական համակարգ:

2. Չեռքի տակ եղած զրավոր ու դաշտային ազգագրական բազմաբովանդակ նյութերի համադրումն ի հայտ է բերում մի պատկեր, որը,

սակայն, չպետք է ընկալել որպես միակ ու բացարձակ տարբերակ Հայաստանի բոլոր պատմա-մշակութային շրջանների համար, թեև ուսումնասիրվող ժամանակահատվածում գործող սովորութային կարգի պայմաններում այն գերակշռողն էր:

Իսկ պատկերը հետևյալն է:


Ա. Ամուսնացող երիտասարդը վրկված էր հարսնացու ընտրելու, նրան տեսնելու, ի մոտո մանաշելու հնարավորությունից: Ավելին, շատ համախ ինքն էլ, ինչպես և հարսնացուն, դառնում էր ,,փեսավորների,, գնման օբյեկտ՝ ,,աղջիկտեսին,, հաջորդող ,,փեսատեսի,, սովորույթը: Փեսացուն չէր մասնակցում ամուսնութայն գործարքի՝ ավանդույթով ընդունված ծիսական հաջորդ փուլերին ևս /խոսքիսպ, խնամախոսութայն, իսկ շատ տեղերում նաև՝ նշանադրութայն/, այնինչ հարսնացուն կամա-ակամա դրանց լռելյայն մասնակիցն էր:

Բ. Փեսան իր նշանածին կարող էր այցելել միայն նշանվելուց հետո, սակայն աներոջից ծածուկ՝ զոքանչի հովանավորութայմբ: Ընդհանրապես խուսանավելու այս սովորույթը հասնում էր՝ ընդհուպ մինչև չխոսկանութայն աներոջ հետ, մինչև որ վերջիս հատուկ մի ծեսով /,,Բերանբացբ,,/ վերջ չէր դնում փեսացուի այս կաշկանդվածութայնը:

Գ. Բուն հարսանյաց հանդեսի պաշագային փեսան շարունակում էր մնալ անվստահ ու անպաշտպան /շրջապատվում էր քավորով, ազաբներով ու փորձառու այլ մարդկանցով/: Ծիսակարգի ողջ ընթացքում նա համարվում էր ենթակա չարակամ ու վնասաբեր ուժերի ներգործութայնը /դա պարզորոշ դիտվում է փեսային լողացնելու, սափրելու, զգեստավորելու, հարսանիքի մացուն մորթելու, ,,ուռքբ,, զրավելու և այլ ծեսերի, ինչպես նաև զանազան պահանակներ կրելու մեջ/:

Յ. Հայոց ավանդութային ամուսնա-հարսանեկան հանգամանքներում փեսացուն նույնքան անդեմ ու իրավագուրկ էր, ինչ և հարսնացուն: Իսկ նահապետական գերդաստանում այդ նորաստեղծ ընտանեկան միավորն ընկնում էր սոցիալական ու զաղափարական գործող չափանիշների այնպիսի մի շրջանակ, ուր ևս երիտասարդ ամուսինների իրավական ու բարոյական կերպարը դրսևորվում է զրեթե միանշանակ:

Կ. Լիովին հնարավոր է, որ ընտանեկան ծիսակարգի ու ներընտանեկան տարբերութայն փոխհարաբերութայնունների համակարգված ուսումնասիրութայնն ի հայտ բերի գերդաստանի տղամարդ անդամների սոսկ առերևույթ գերիշխանութայնը կանացի կեսի նկատմամբ: Այնուամենայնիվ, հայրիրավական սկզբունքներին խորսխված մեծ ընտանիքում, տղա-



մարդու իշխանությունը սրբազործող միակ պարզան սեփականատիրական իրավունքն էր, որը նույնպես վերապահված էր ոչ միայն նահապետին, այլ մասամբ նաև նրա տիկնոջը /տանտիրուհուն/ հատկապես տնային տնտեսության շրջանակներում:

ԷՍԹԵՐ ԽԵՄՉՅԱՆ
ԲԱՆԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՐԱԴՄԱՆ ՎԻՃԱԿԸ
ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Ներկայիս Հայկական ՍՍՀ իջևանի շրջանը XIX դ. վերջերին մտնում էր Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի կազմի մեջ: Իջե-վանի շրջանի ազգաբնակչությունը ազգագրորեն միատարր չէ: Ըստ Մա-կար Թարխուղարյանի /Արցախ, 1895 թ./ իջևանի շրջանի /նախկին Ղա-զախի գավառի/ բնակչությունն ունեցել է երեք շերտ. ա/տեղաբնիկ-ներ, բ/Ղարաբաղի խաչներ, Ջրաբերդ և Գյուլիստան մելիքություններից տեղափոխվածներ, գ/ Արարատյան դաշտից /Ղըրխ-Քուլաղ, Արզն ու Գամ-րեզ գյուղերից/ տեղափոխվածներ: XX դ. սկզբին /15-20-ական թթ./ մի շերտ ևս ավելացավ՝ գաղթականություն Արևմտյան Հայաստանից:

Ներկայումս շրջանի գյուղերի ազգաբնակչությունը ազգագրորեն միատարրվել է, սակայն բանահյուսական նյութերի դասակարգման տեսա-կետից պետք է տարբերակել երկու շերտ. ա/ արևելահայ, բ/ արևմտա-հայ:

2. Չնայած XIX դ. վերջին բանահավաքչական աշխատանքները լայն թափ ստացան, սակայն Ղազախի գավառում այդ աշխատանքներն անշահ չափով են տարվել: Ելնելով արխիվային ու տպագրված նյութերից, Ի-ջևանի շրջանի բանահավաքչության պատմությունը կարելի է բաժանել երեք ժամանակահատվածի: Ա. XIX դ. վերջի բանահավաքներ /Քաջբերդ-նի, Խաչատուր Շահնազարյան/, Բ. XX դ. 20-30-ական թթ. բանահա-վաքներ /Գեղամ Թարվերդյան, Նիկոլ Սարգսյան/, Գ. XX դ. 50-80-ա-կան թթ. բանահավաքներ՝ ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական գիտարշավ /Ա. Նազինյան, Վ. Սիվաղյան, Ա. Կարապետյան/, Ա. Կարապետյան՝ 1957 թ. մինչև այժմ, է. Խեմ-չյան՝ 1970-1976 թթ., Երևանի պետական Համալսարանի ուսանողական բանահյուսական գիտարշավ, 70-ական թթ., Ն. Հակոբյանի ղեկավարու-թյամբ:

3. Իջևանի շրջանի բանահյուսական երկացանկը պայմանավորված է ազգաբնակչության վերոհիշյալ շերտերի, որպես ազգագրական տարբեր շրջանների ավանդույթի կրողների, միջավայրում բանահյուսական նյութ-